ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
N 2

ք. Կապան «25» հունվարի 2019թ

ՀՀ Սյունիքի մարզպետարանը ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ Գ.Թադևոսյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ Նվիրատու, մի կողմից և Կապանի «Ա.Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ը ՝ ի դեմս տնօրեն Կ.Արզումանյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ Նվիրառու, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 28.12.2018թ թիվ 1515-Ն որոշումը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն Կատարողին պահպանման ծախսերի համար հատկացնում է 83167.3 հազ. /Ութսուներեք մլն հարյուր վաթսունյոթ հազար երեք հարյուր / ՀՀ դրամ , այդ թվում ԱԱՀ-ն՝ 13861.2 հազ.դրամ:

2.Գումարը տրամադրելու և ծախսելու կարգը

2.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան :
2.2.Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Պատվիրատուի ներկայացուցչի հնարավորությունը:
2.3. Սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուն սույն պայմանագրի 1.1. կետում նշված գումարը ըստ հավելվածի փոխանցում է Կատարողի գանձապետական հաշվին:

3.Հաշվետվությունը

3.1. Հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Այլ դրույթներ

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 25.12.2019թ.:
4.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ , որը կնքվում է գրավոր:
4.3. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.Կողմերի իրավաբանական հասցեները

Նվիրատու

ՀՀ Սյունիքի մարզպետարան

Ք.Կապան Նժդեհի 1
ՀՀ ֆիննախ գործառ.վարչ
հ/հ 900311144027
հհվհ 09415375

Գ.Թադևոսյան

Նվիրառու

Կապանի «Ա.Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ

Ք. Կապան
ՀՀ ֆիննախ գործառ.վարչ
հհ 900318000016
հհվհ 09401733

Կ.Արզումանյան